

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի հունիսի 12-ի օրենսգրքի 169.14-րդ հոդվածի՝

1) վերնագիրը «ՉԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ» բառից հետո լրացնել «ԿԱՄ ՕՐԵՆՔՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ» բառերով.

2) 1-ին մասը «Առանց համապատասխան» բառերից առաջ լրացնել «Օրենքով արգելված կամ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԺ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Առաջարկության հեղինակը, Գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. ««Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝ ա. մերձավոր ազգականներ՝ ծնողներ, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, հարազատ եւ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրներ եւ քույրեր, պապ, տատ, թոռներ, ինչպես նաեւ ամուսին եւ ամուսնու ծնողներ, վերջիններիս համար՝ փեսա եւ հարս ունեցող անձանց համար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի, բ. այն անձանց, ովքեր դատարանում ներկայացնում են այն իրավաբանական անձի շահերը, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են վերը նշված	Ընդունվել է:	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «3. «Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝ 1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապու, տատու, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի. 2) մերձավոր ազգականին (ազգականներին)՝ կանոնադրական

		մերձավոր ազգականին»		կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:»
2.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասում երկրորդ անգամ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «կողմից վավերացրած» բառերը:	Ընդունվել է:	Այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեությունն իրականացնում է սույն օրենքով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ եւ փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
3.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածում՝ երկրորդ մասի երրորդ կետում «ձեռնարկատերերին» բառից հետո «և» բառը փոխարինել «կամ» բառով: երկրորդ մասը ավելացնել 6-րդ կետով. «առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, այդ թվում նաև տեսակցությանը հրավիրել արտոնագրված թարգման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:	Ընդունվել է մասնակի: Առավել նպատակահարմար է բառերը միմյանցից անջատել ստորակտնելով:	,դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին եւ իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: 6. առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, այդ թվում նաև տեսակցությանը հրավիրել արտոնագրված թարգման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

4.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ	Առաջարկվում է օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 23. Փաստաբանի օգնականը. Փաստաբանն, իրավունք ունի ունենալու օգնականներ: Փաստաբանի օգնական կարող է լինել միայն բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձը: Փաստաբանի օգնական չի կարող լինել սույն օրենքի 33-րդ հոդվածում նշված անձինք: Փաստաբանի օգնականը իր կարգավիճակը ձեռք է բերում պարզեցված կարգով փաստաբանների պալատի խորհրդի կողմից արտոնագրվելու միջոցով՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով: Սույն օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավաստեցվում է փաստաբանի կարգավիճակին, որը օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից, բացառությամբ սույն հոդվածում թվարկված իրավունքներից՝ 1) փաստաբանի օգնականը իրավունք չունի մասնակցել դատարանում կամ մինչդատական վարույթում՝ քննչական կամ դատավարական գործողություններին՝ առանց իր ղեկավար փաստաբանի: 2) փաստաբանի օգնականը իրավունք չունի ստորագրել և ներկայացնել վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, հայցադիմումներ, բացարկներ, ինչպես նաև հարցեր	Ընդունվել է Նախագիծը լրացվել է նետոյալ բովանդակությամբ նոր՝ 18-րդ հոդվածով. « Հոդված 18. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 23. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ «1. Փաստաբանն իրավունք ունի ունենալու օգնականներ: Փաստաբանի օգնական կարող է լինել միայն բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը: Փաստաբանի օգնական չի կարող լինել սույն օրենքի 33-րդ հոդվածում նշված անձը: 2. Փաստաբանի օգնականը իր կարգավիճակը ձեռք է բերում պարզեցված կարգով փաստաբանների պալատի խորհրդի կողմից արտոնագրվելու միջոցով՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով: 3. Սույն օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավաստեցվում է փաստաբանի կարգավիճակին, որը օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից՝ հետևյալ բացառություններով. 1) փաստաբանի օգնականը իրավունք չունի մասնակցել դատարանում կամ մինչդատական վարույթում քննչական կամ դատավարական գործողություններին՝ առանց իր ղեկավար փաստաբանի.

	տալ՝ քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելիս: 3) փաստաբանի օգնականը իրավունք չունի մասնակցել փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում նաև հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, ընտրել և ընտրվել պալատի մարմիններում և պալատի նախագահ, մասնակցել պալատի կանոնադրության և վարքագծի կանոնագրքի քվեարկությանը: Փաստաբանի օգնականի իրավունքների սահմանափակման այլ դեպքեր կարող են նախատեսվել նաև վարքագծի կանոնագրքով: Փաստաբանի օգնականը կրում է բոլոր պարտականությունները, որոնք սույն օրենքով վերապահված է փաստաբանին, բասառոթյամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը: Փաստաբանի օգնականի պարտականությունների սահմանափակման այլ դեպքեր կարող են նախատեսվել փաստաբանական պալատի կանոնադրությամբ: Փաստաբանի օգնականը փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոնների պահանջները խախտելու դեպքում ենթակա է կարգապահական պատասխանատվության: Փաստաբանի օգնականի արտոնագրի դադարեցման և կասեցման կարգը ու դեպքերը նախատեսված են սույն օրենքի 36-րդ և 38-րդ հոդվածներով: Փաստաբանի օգնականն իր ինքնությունը հաստատում է փաստաբանի օգնականի	2) փաստաբանի օգնականը իրավունք չունի ստորագրել և ներկայացնել հայցադիմումներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, բացարկներ, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև հարցեր տալ քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելիս: 3) փաստաբանի օգնականը իրավունք չունի մասնակցել փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում նաև՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, ընտրել և ընտրվել պալատի մարմիններում և պալատի նախագահ, մասնակցել պալատի կանոնադրության և վարքագծի կանոնագրքի քվեարկությանը: 4. Փաստաբանի օգնականի իրավունքների սահմանափակման այլ դեպքեր կարող են նախատեսվել նաև փաստաբանների վարքագծի կանոնագրքով: 5. Փաստաբանի օգնականը կրում է բոլոր պարտականությունները, որոնք սույն օրենքով վերապահված են փաստաբանին, բացառությամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության: 6. Փաստաբանական պալատի կանոնադրությամբ կարող են նախատեսվել
--	--	---

		վկայականով, որոնց ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը»:		փաստաբանի օգնականի պարտականությունների սահմանափակման այլ դեպքեր: 7. Փաստաբանի օգնականը փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոնների պահանջները խախտելու դեպքում ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի 6-րդ գլխով նախատեսված կարգով: 8. Փաստաբանի օգնականի արտոնագրի դադարեցումը կամ կասեցումը իրականացվում է սույն օրենքի 36-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված կարգով և դեպքերում: 9. Փաստաբանի օգնականն իր ինքնությունը հաստատում է փաստաբանի օգնականի վկայականով, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը»:
5.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Առաջարկվում է օրենքի 41 հոդվածը շարադրել հետևյալ բավանդակությամբ. «Հոդված 41. Հանրային պաշտպանությունը Հանրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը: Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է. 1)խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում,	Ընդունվել է:	«Հոդված 41. Հանրային պաշտպանությունը 1. Հանրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը: 2. Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է. 1)խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի

	ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում, 2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով: Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում: Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը: 5. Այն անձանց շրջանակը, ով կարող է ստանալ անվճար իրաքավաբանական օգնություն, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Նախագծից 29-րդ հոդվածի 3-րդ կետը հանել :	դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում, 2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով: 3. Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում: 4. Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը: 5. Այն անձանց շրջանակը, ով կարող է ստանալ անվճար իրաքավաբանական օգնություն, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով
--	---	--

				նախատեսված դեպքերի:»: Միաժամանակ, նախագծի 29-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով. «7. Սույն օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում նշված որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:»:
6.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ	Առաջարկվում է օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասում «նախագահը» բառը փոխարինել «խորհուրդը» բառով:	Ընդունվել է: Հաշվի առնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների հայտերի եւ փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի վիճակագրական տվյալները՝ փաստաբանների պալատի խորհուրդը հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությամբ օրենքով սահմանված ժամկետում հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:
7.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ	Օրենքի 45.4 հոդվածի 2-րդ մասում «չորս անդամից» հետո լրացնել «և ՀՀ արդարադատության նախարարության մեկ ներկայացուցչից» բառերով:	Ընդունվել է: Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը կազմավորվում է փաստաբանների պալատի նախագահից եւ փաստաբանների պալատի խորհրդի

				կողմից փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված առնվազն չորս անդամից և ՀՀ արդարադատության նախարարության մեկ ներկայացուցիչ:
8.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Առաջարկվում է օրենքի 45.4 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում «հաստատում է» բառից հետո լրացնել «ունկնդիրների ուսման վարձի չափը, դրա վճարման կարգը և» բառերը:	Ընդունվել է:	Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը՝ 1) հաստատում է ունկնդիրների ուսման վարձի չափը, դրա վճարման կարգը և փաստաբանական դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգերը եւ աշխատակազմի հաստիքացուցակը.
9.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «պարտավորությունների» բառը փոխարինել «պարտականությունների» բառով: Նույն մասում հանել «այլ» բառը:	Ընդունվել է	Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝ 1. խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն).
10.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասի «դատական մարմինների» բառերը փոխել «դատարանների» բառով:	Ընդունվել է	«Դատարանների կողմից դատական ծախսերի (վնասների) հատուցման հետ կապված փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը որոշելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդը կարող է սահմանել փաստաբանական գործունեության վճարների միջին

				գնացուցակ: Նշված գնացուցակը չի կարող օգտագործվել այլ նպատակով:»
11.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Փաստաբանների պալատի նախագահի և այլ մարմինների լիազորություններն ավարտվում են միայն հաջորդ կազմի կամ նախագահի ընտրվելուց հետո՝ լիազորություններն ստանձնելու պահից» բառերով:	Ընդունվել է	«Փաստաբանների պալատի նախագահի եւ այլ մարմինների լիազորություններն ավարտվում են միայն հաջորդ կազմի կամ նախագահի ընտրվելուց հետո՝ լիազորություններն ստանձնելու պահից:»:
12.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «ինչպես նաև փոփոխություններ եւ (կամ) լրացումներ է կատարում դրանցում» բառերը:	Ընդունվել է	«հաստատում է փաստաբանների պալատի կանոնադրությունը եւ փաստաբանի վարքագծի կանոնագիրքը»
13.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 12-րդ հոդվածի առաջին մասը առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փաստաբան է հանդիսանում այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և որը ստացել է համապատասխան արտոնագիր փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:»	Ընդունվել է	«1. Փաստաբան է հանդիսանում այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և որը ստացել է համապատասխան արտոնագիր փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:»
14.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան	ԱԺ Նախագծի 22-րդ հոդվածի համաձայն. «որակավորման հանձնաժողովի տրված վկայագիրն ուժի մեջ է տրման պահին հաջորդող վեց ամսվա ընթացքում»: Որակավորման հանձնաժողովի վկայագրի ուժի մեջ մնալու ժամկետն առաջարկվում է երկարացնել՝ այն դարձնելով մինչև հաջորդ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար որակավորման քննությունների անցկացումը:	Ընդունվել է	«Որակավորման հանձնաժողովի տված վկայագիրն ուժի մեջ է տրման պահից մինչև հաջորդ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար որակավորման քննությունների անցկացումը:»:

15.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան ԱԺ	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով www.azdarar.am կայքում հրապարակում է փաստաբանների ցուցակը :»	Ընդունվել է	Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով www.azdarar.am կայքում հրապարակում է փաստաբանների ցուցակը :»
16.	ՀՀ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյան ԱԺ	Նախագծի 45.4 հոդվածի 3-րդ մասի « երկու տարի» բառերը փոխել «մեկ տարի» բառերով:	Ընդունվել է	3. «Փաստաբանական դպրոցից որպես կարգապահական տույժ հեռացված ունկնդիրը զրկվում է մեկ տարվա ընթացքում փաստաբանական դպրոց կրկին ընդունվելու իրավունքից:»
17.	ՀՀ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան ԱԺ	Նախագծի 17-րդ հոդվածի առաջին պարբերությունում «կողմից վավերացված» բառերը առաջարկում ենք հանել : Նախագծի 27-րդ հոդվածով նախատեսվում է օրենքը լրացնել 39.8-րդ հոդվածով, որի 1-ին մասի 4-րդ կետի «փաստաբանի արտոնագիրը դադարեցվել է» բառերն առաջարկում ենք փոխարինել «սույն օրենքով սահմանված կարգով	Չի ընդունվել: Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի.« Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո:» Ընդունվել է:	4) կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է

		փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել է» բառերով: Նույն հոդվածով նախատեսվում է Օրենքը լրացնել 39.9-րդ հոդվածով, որի 6-րդ մասի «Փաստաբանը տույժ չունեցող է համարվում » բառերն առաջարկում ենք փոխարինել «փաստաբանը համարվում է կարգապահական տույժի չենթարկված» բառերով:	Ընդունվել է:	«6. Փաստաբանը համարվում է կարգապահական տույժի չենթարկված »»
18.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան	Նախագծի 29-րդ հոդվածի համաձայն որակավորման հանձնաժողովի տրված վկայագիրն ուժի մեջ է տրման պահին հաջորդող վեց ամսվա ընթացքում: Որակավորման հանձնաժողովի վկայագրի ուժի մեջ մնալու ժամկետն առաջարկվում է երկարացնել՝ այն դարձնելով մինչև հաջորդ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր շատանալու համար որակավորման քննությունների անցկացումը:	Ընդունվել է:	«Որակավորման հանձնաժողովի տված վկայագիրն ուժի մեջ է տրման պահից մինչև հաջորդ՝ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար որակավորման քննությունների անցկացումը»:
19.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան	Նախագծում առկա են նաև որոշ խմբագրական բնույթի շտկումներ կատարելու անհրաժեշտություն: Մասնավորապես, Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «պետական մարմիններում» բառերից հետո անհրաժեշտ է ավելացնել «տեղական ինքնակառավարման մարմիններում» բառերը, իսկ 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «պետական ծառայության» բառերից հետո՝ «համայնքային ծառայության» բառերը:	Ընդունվել է:	«Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ պետական մարմիններում եւ հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում այդ թվում նաև՝ դատական մարմիններում:» 4) անցել է հանրային ծառայության՝ պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի քան 5 տարի ժամկետով»:

20.	ՀՀ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան ԱԺ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում կատարել համապատասխան փոփոխություններ, նախագիծը գործող օրենսգրքի 169.14-րդ հոդվածի վերնագրի հետ համապատասխանեցնելու նպատակով:	Ընդունվել է	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմագրությամբ. «1) վերնագիրը «ԶԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ» բառից հետո լրացնել «ԿԱՄ ՕՐԵՆՔՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ» բառերով.»:
21.	ՀՀ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան ԱԺ	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում» կատարել համապատասխան փոփոխություններ՝ օրենսգիրքը «Փաստաբանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ համապատասխանեցնելու համար:	Ընդունվել է	Փաթեթն ընդգրկվել է նոր՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «1. Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:»: